ԸՆՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընտանեկան ճգնաժամերի նկարագրությունը ելնում է երկու մոտեցումներից՝

1. Ճգնաժամերը դիտարկվում են որպես ընտանիքի կենսական փուլերի միջև անցումային պահեր՝ **նորմատիվային ճգնաժամեր**:
2. Ընտանիքում ճգնաժամերը ի հայտ են գալիս ընտանեկան համակարգի կայունության վրա ազդող որոշակի իրադարձությունների հետևանքով՝ **ոչ նորմատիվային ճգնաժամեր**:

Ընտանեկան ճգնաժամերը, հանդիսանալով ճգնաժամի տեսակ, ունեն իրենց սպեցիֆիկ բնութագրիչները: Դրանք են՝

1. ընտանիքում իրավիճակային հակասությունների սրացումը, որը հանդիսանում է ընտանեկան ճգնաժամը սկզբնավորող փուլ: Սովորաբար սա աստիճանական գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում լարվածության կուտակում և ժայթքում,
2. ընտանիքում իրավիճակային հակասությունների սրացումը, որը հանդիսանում է ընտանեկան ճգնաժամը սկզբնավորող փուլ: Սովորաբար սա աստիճանական գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում լարվածության կուտակում և ժայթքում,
3. ընտանեկան համակարգում անկայունության աճը, որը փաստում է ընտանիքի հոմեոսթազի խախտման և համակարգային կազմակերպվածության փլուզման վտանգի մասին,
4. ճգնաժամի գեներալիզացիա (ընդհանրացում), երբ դրա ազդեցությունը տարածվում է ընտանեկան հարաբերությունների և փախազդեցությունների ողջ տիրույթի վրա:

Նորմատիվային ընտանեկան ճգնաժամեր

Առողջ ընտանիքը մշտապես գտնվում է ներքին կայունության պահպանման և զարգացման ու աճի հավասարակշռության մեջ, և զարգացման մեկ փուլից անցումը մյուս փուլին զուգակցվում է որոշակի համակարգային ցնցումներով և վերակառուցումներով, ինչն էլ հենց պայմանավորում է նորմատիվային ճգնաժամերը:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

Առանձնացվում է նորմատիվային **7 ճգնաժամ՝**

1. ամուսնական պարտականությունների ստանձնում,
2. ծնողական դերերի յուրացում և ընտանիքում նոր անդամի առկայության (երեխայի ծնունդի կամ որդեգրման) ընդունում,
3. երեխաների ներգրավվածություն արտաքին սոցիալական համակարգերում,
4. երեխայի՝ դեռահասություն մուտք գործելու փաստի ընդունում,
5. հասունացած երեխայի կողմից տնից հեռանալը,
6. ամուսինների նորից երկուսով մնալը,
7. ամուսիններից մեկի մահվան փաստի ընդունումը:

Ոչ նորմատիվային ընտանեկան ճգնաժամեր

Այս տեսակի ճգնաժամի առաջացումը հնարավոր է ընտանիքի կենսացիկլի ցանկացած փուլում և կապված է բացասական կենսական իրադարձությունների հետ:

Առանձնացնում է ընտանեկան ճգնաժամերի հանգեցնող ոչ նորմատիվային գործոնների երեք խումբ՝

1. արտաքին բարդություններ՝ բնակատեղի, աշխատանքի բացակայություն և այլն,
2. անսպասելի իրադարձություններ, սթրեսներ՝ ընտանիքը կամ անդամներից մեկը դառնում է ավտովթարի, ահաբեկչության, բռնության, պատերազմի զոհ և այլն,
3. ընտանիքի ներքին անկարողությունը ադեկվատ ընկալելու և վերապրելու որևէ սպառնացող, կոնֆլիկտային կամ սթրեսային ընտանեկան իրադարձություն՝ անդամներից մեկի լուրջ հիվանդություն կամ մահ, ամուսնական դավաճանություն կամ ամուսնալուծություն և այլն:

Ճգնաժամում կարելի է առանձնացնել հետևյալ փոխկապակցված բաղադրիչները՝

1. ճգնաժամային իրադարձություն՝ որևէ ուժեղ, բացասաբար ներազդող և անսպասելի իրադարձություն, որն ունակ է կազմաքանդելու ընտանեկան համակարգը և/կամ դրա բնականոն գործառնականությունը,

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

2. ընտանիքի անդամների՝ տեղի ունեցողի ընկալում և գիտակցում՝ այն, թե ինչպես է տվյալ իրադարձությունը բեկվում ընտանիքի անդամների հոգեկանում, ինչ եղանակով է ներքնայնացվում,
3. ընտանիքի անդամների վերաբերմունք տվյալ իրադարձությանը և դրա վերապրման առանձնահատկությունները. սուբյեկտիվ վերապրումն ու ընկալումն է, դիրքորոշումներն ու կարծրատիպերը, անդամների հոգեբանական պաշտպանական մեխանիզմները և
4. փոփոխություններ ընտանեկան համակարգում՝ ճգնաժամը անպայմանորեն ներազդում է ընտանեկան ամբողջական համակարգի վրա՝ անմասն չթողնելով ներքին սահմանները, կառուցվածքային գործընթացները և փոխազդեցությունները, դերային բաշխումները և նորմերը և այլն,
5. ճգնաժամից դուրս գալու հնարավոր անհատական և ընտանեկան եղանակները՝ ընտանիքը որպես համակարգ և առանձին անհատները կարիք են ունենում ճգնաժամի հաղթահարման գործընթացում սպեցիֆիկ աջակցության:

Առավել տարածված ոչ նորմատիվային ընտանեկան ճգնաժամերն են՝

- ամուսնական դավաճանությունը,
- ամուսնալուծությունը,
- ընտանիքի անդամի ծանր հիվանդությունը,
- ընտանիքի անդամի մահը,
- բռնությունը և ինցեստը:

Այս նյութը ստեղծվել է Միացյալ Թագավորության կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Միացյալ Թագավորության կառավարության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: